Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՄԱՐԶԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐԱՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի համեմատությամբ 2019 թվականին մարզում կրկնապատկվել են հակակարկտային ցանցապատ տարածքները, ջերմոցները և ջերմատները, կաթիլային ոռոգվող հողատարածքները և սառնարանային տնտեսությունները.

- Հակակարկտային ցանցապատ տարածք՝ **2018թ.** - 79 հա
  2019թ. - 176.41 հա
- Ջերմոցներ և ջերմատներ՝ **2018թ.** - 430 հա
  2019թ. - 814.61 հա
- Կաթիլային ոռոգվող հողատարածք՝ **2018թ.** - 855 հա
  2019թ. - 1635.74 հա
- Սառնարանային տնտեսություն՝ **2018թ.** - 14300 տոննա
  2019թ. - 21100 տոննա

2019 թվականի հունիսի 1-ի *դրությամբ գյուղատնտեսության մեջ փաստացի օգտագործված հողատարածությունները կազմել են* ***41644 հա,*** *որը* ***223 հա-ով*** *գերազանցում է* ***2018 թվականի ցուցանիշը:***

Մարզում այս տարի պտուղ-բանջարեղենի արտադրությունը, բացառությամբ կարտոֆիլի, գերազանցել է նախորդ տարիների ցուցանիշը:

- Հացահատիկ և հատիկաընդեղեն **2019 թ.** 15.2 հազ.տ / **2018 թ.** 15.05 հազ. տ.
- Կարտոֆիլ **2019 թ.** 44.15 հազ.տ / **2018 թ.** 42.6 հազ. տ.
- Բանջար **2019 թ.** 271.3 հազ.տ. / **2018 թ.** 285.58 հազ. տ.
- Բոստան **2019 թ.** 76.18 հազ.տ. / **2018 թ.** 90.7 հազ. տ.
- Բազմամյա խոտ **2019 թ.** 97.1 հազ.տ. / **2018 թ.** 101.9 հազ. տ.
- Խաղող **2019 թ.** 85.33 հազ.տ. / **2018 թ.** 89.46 հազ. տ.
- Պտուղ **2019 թ.** 91.77 հազ.տ. / **2018 թ.** 92.65 հազ. տ.

Հաշվետու տարում վերամշակող ձեռնակությունների կողմից մթերվել է ***12464 տոննա գյուղմթերք՝*** *պտուղ-բանջարեղեն, որը* ***60%-ով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը:*** ***Խաղողի մթերումն էլ կազմել է 82 հազար 352 տոննա, որը*** *30 հազար տոննայով գերազանցել է նախորդ տարվա մթերման ցուցանիշը:*

Կառավարության համապատասխան որոշմամբ դրամական աջակցություն է ցուցաբերվել կարկտահարությունից 50%-ից ավել վնաս կրած մարզի 18 համայնքի 1095 գյուղացիական տնտեսության:

<u>Աջակցությունը տրամադրվել է հետևյալ կերպ.</u>

- Հացահատիկի և հատիկընդեղենի **1 հա-ի համար 30 հազար դրամ**
- Խաղողի և պտղի համար **համախառն եկամտի 5%-ի չափով**
- Բանջար-բոստանային մշակաբույսերի համար **համախառն եկամտի 4%-ի չափով**

Հաշվետու տարում մարզպետարանի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է **շուրջ 1720 հա թաքնված այգի**, որոնք բերվել են օրինական դաշտ, և տարբեր համայնքների **բյուջե է մուտքագրվել 34 մլն դրամ:**

Կտրուկ ավելացել է նաև **ոռոգման ջրի վարձավճարների հավաքագրման ցուցանիշը, որն այս** պահի դրությամբ **<u>280 մլն</u>** դրամով գերազանցում է **2018 թվականի ամբողջ հավաքագրումների մակարդակը:**

2019 թվականի գյուղատնտեսական տարվա համար կարևոր ձեռքբերում է նաև մթերման և ոռոգման հետ կապված խնդիրների բացակայությունը, որը հիմնականում պայմանավորված է եղել ոլորտի մեր գործընկերների հետ ունեցած փոխգործակցությամբ, պետական ճիշտ քաղաքականությամբ և մի շարք այլ հանգամանքներով:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության համակարգմամբ Արմավիրի մարզի գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցությամբ իրականացվել է 9 անուն ծրագիր

1. Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման **1025 ծրագիր՝ 4 մլրդ 371 մլն դրամի շրջանակում:**
2. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության **45 ծրագիր՝ 250 մլն դրամի շրջանակում:**
3. Ոռոգման արդիական համակարգերի ներդրման **2 ծրագիր՝ 9 մլն դրամի շրջանակում:**
4. Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության **2 ծրագիր՝ 87 մլն դրամի շրջանակում:**
5. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման **1 ծրագիր՝ 4.6 մլն դրամի շրջանակում:**
6. Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության **14 ծրագիր՝ 231 մլն դրամի շրջանակում:**

7. Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման **7 ծրագիր՝ 543 մլն դրամի շրջանակում:**
8. Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման **1 ծրագիր՝ 4 մլն դրամի շրջանակում:**
9. Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրին մասնակցելու **համար կնքվել է 3 պայմանագիր:**

ԾՐԱԳՐԵՐ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածը հաջողված է եղել նաև մարզում իրականացված ծրագրերի և ներդրումային քաղաքականության առումով: Պետական բյուջեի միջոցներով, ինչպես նաև պետական աջակցությամբ իրականացվող համաֆինանսավորման ծրագրերի, հայաստանյան և դոնոր կազմակերպությունների, առանձին անհատների ու բարերարների աջակցությամբ և այլ միջոցներով մարզի սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ավելի քան 209 ծրագիր է իրականացվել՝ 12 մլրդ դրամի շրջանակում:

- *2019 թվականին Արմավիրի մարզում իրականացվել է շուրջ 10 կմ ավել ճանապարհաշինական աշխատանք (հիմնանորոգում, վերանորոգում, մասնակի վերանորոգում), քան վերջին 3 տարին միասին վերցված.*
- ***46 համայնքում իրականացվել են 37 կմ երկարությամբ ճանապարհաշինական աշխատանքներ*** (հիմնանորոգում, վերանորոգում, մասնակի վերանորոգում):
  - պետական բյուջեով - **14 կմ**
  - պետական և համայնքային բյուջեներով - **10.8 կմ**
  - մարզպետարանի և մասնավորի համագործակցությամբ - **12.2 կմ**

  *(Պետական բյուջեի միջոցներով **նախնական նախատեսված է <u>15,4 կմ ճանապարհի հիմնանորոգում</u>**)*

- ***24 համայնքում խմելու ջրի ջրագծերի ներքին ցանցի կառուցում, վերակառուցում և վերանորոգում***
  - պետական և համայնքային բյուջեներով – 16 համայնք
  - միջազգային կազմակերպություն և համայնքային բյուջե – 1 համայնք

- **9 համայնքում ոռոգման համակարգերի բարելավում**
  - պետական և համայնքային բյուջեներով – 8 համայնք

  *(**41 համայնքում** նախատեսվում է **91630 մ երկարությամբ** ոռոգման ներտնտեսային ցանցի վերանորոգում)*

- **7 համայնքում 8 նոր խորքային հորի հորատում, ևս 8-ի վերականգնում**

- պետական բյուջեով - 7 համայնք

- **4 համայնքում կոյուղագծի կառուցում, ընդլայնում**
  - պետական և համայնքային բյուջեներով – 4 համայնք

- **4 համայնքում մշակույթի տան վերանորոգում** *(2 -շենքի վերանորոգում, 1-տանիքի վերակառուցում, 1- ջեռուցման համակարգի անցկացում)*
  - պետական և համայնքային բյուջեներով – 4 համայնք
- **16 համայնքում 14 կմ արտաքին լուսավորության ցանցի վերանորոգում (2 կմ միջպետական, 12 կմ համայնքային նշանակության ճանապարհ)**
  - պետական և համայնքային բյուջեներով – 1 համայնք
  - համայնքային բյուջեներով - 5 համայնք

- **9 մանկապարտեզի շենքի վերանորոգում և գույքի ձեռքբերում**
  - պետական և համայնքային բյուջեներով – 3 համայնք
  - համայնքային բյուջե և մասնավոր կազմակերպություն - 6 համայնք

- **<u>26</u> դպրոցում իրականացվել են կամ մինչև տարեվերջ կավարտվեն հիմնանորոգման, մասնակի վերանորոգման, ջեռուցման համակարգի ներդրման աշխատանքները**:
  - պետական աջակցությամբ **հիմնանորոգվում է 1 դպրոց, ևս 1-ն էլ մասնակի վերանորոգվելու է**
  - մարզպետարանի աջակցությամբ և դպրոցի բյուջեի խնայած միջոցներով **մասնակի վերանորոգվել է 15 դպրոց**
  - եռակողմ համագործակցությամբ (ԲՀ, համայնք և դպրոց) **մասնակի վերանորոգվել է 1 դպրոց**
  - բարերարի միջոցներով **մասնակի վերանորոգվել է 2 դպրոց**

(նախատեսված է 9 մարզադահլիճի հիմնանորոգում)

Մարզի **41 հանրակրթական դպրոցների** տրամադրվել է **6 անուն մարզագույք՝ 27 մլն 291 հազ դրամ արժողությամբ**:

- **5 դպրոցի կառուցման ծրագիր է հաստատվել**
  - պետական աջակցությամբ **– 4 դպրոց**
  - ՀԲ կողմից ֆինանսավորվող <<Կրթության բարելավում>> վարկային ծրագրով **– 1 դպրոց**

(նախորդ 10-ը տարում մարզում կառուցվել է 3 դպրոց)

- **8 դպրոցում ներդրվել է <<Դպրոցական տաք սնունդ>> ծրագիրը,** որից օգտվող դպրոցների թիվը դարձել է 65: *(2020 թ. ծրագիրը հասանելի ենք դարձնելու մարզի բոլոր դպրոցներին)*
- **5 դպրոցում հիմնվել է <<Արմաթ>> լաբորատորիա**:
- ***2 համայնքում բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում***
  - պետական և համայնքային բյուջեներով
- ***2 համայնքում գյուղտեխնիկայի ձեռքբերում***
  - պետական և համայնքային բյուջեներով
- ***1 համայնքում համայնքապետարանի շենքի վերանորոգում***

- պետական և համայնքային բյուջեներով

- ***1 համայնքում մաքրման կայանի վերականգնում***
  - պետական և համայնքային բյուջեներով
- ***1 համայնքում մանկական խաղահրապարակի կառուցում***
  - պետական և համայնքային բյուջեներով
- **1 բուժհաստատության մասնակի վերանորոգում**
  - խնայած միջոցներով

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Արմավիրի մարզում հաշվետու ժամանակահատվածում 50%-ով ավելացել է հետաքրքրվածությունը փոքր և միջին բիզնեսի նկատմամբ:

- Արմավիր քաղաքում **2 խոշոր ներդրումային ծրագիր՝ 948 մլն դրամի** շրջանակում.
  - <<Լեման>> հարսանյաց սրահ - 710 մլն դրամ
  - <<ԱՐՄՄԵԴ>> բժշկական կենտրոն - 238 մլն դրամ

- Էջմիածին քաղաքում **5 խոշոր ներդրումային ծրագիր՝ 2 մլրդ 539 մլն դրամ** ընհանուր արժողությամբ (կառուցվել է 2 հյուրանոց, 1 հարսանյաց սրահ, 2 բնակելի շենք):

- Մեծամոր քաղաքում - կառուցվել է **1 մարզասրահ՝ 300 մլն դրամի շրջանակում**:
- Փարաքար համայնքում իրականացվել է **15 ներդրումային ծրագիր՝ 759 մլն դրամի շրջանակում:**

- Նալբանդյան համայնքում ամերիկահայ բարերարի կողմից իրականացվել է **2 ներդրումային ծրագիր**, որոնց արդյունքում կառուցվել **է 14 բնակելի տուն և 1 բուժկետ՝ 404 մլն դրամի շրջանակում:**

- Պտղունք համայնքում **1 ներդրումային ծրագիր՝ 47 մլն դրամի շրջանակում:**

- **4 համայնքում** մասնավոր ընկերությունների կողմից 777.2 հազար խմ ընդհանուր տարողությամբ **ջրամբարների կառուցում՝ 4,5 մլրդ դրամի շրջանակում:**

- **7 համայնքում** մասնավոր ընկերությունների կողմից **163.39 հա ինտենսիվ այգու հիմնում:**

- **Միայն 6 գործարար ընդլայնել է գործունեությունն Արմավիրի մարզում:** Ընդհանուր առմամբ, ձեռք է բերվել **2820 հեկտար հողատարածք**, հիմնականում ընկույզի, պիստակի, ունաբի, նշի այգիներ հիմնելու, մթերող ձեռնակություն կառուցելու և չրի արտադրությունն ընդլայնելու նպատակով:

- <<Ամրակ>> ԲԲԸ-ի տնօրենի հետ համագործակցության արդյունքում իրականացման փուլում է Արմավիր քաղաքի Մխիթար Հերացու փողոցի թիվ 5 հասցեի պետական գույքի հաշվեկշռում գտնվող և չօգտագործվող շինությունները վերանորոգելու և որպես բնակարաններ Արմավիր քաղաքի Մովսես Սիլիկյան փողոցի **թիվ 1 այրված** և **թիվ 9 վթարային շենքերի թվով 26 ընտանիքի** անհատույց տրամադրելու գործընթացը:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

- Հաշվետու ժամանակահատվածում հաջողությամբ կազմակերպվել և իրականացվել են Ազգային ժողովի արտահերթ ընտրությունները, ինչպես նաև 28 համայնքում համայնքի ղեկավարի և 9 համայնքում ավագանու անդամի ընտրությունները: **Եղեգնուտ և Ծիածան** համայնքներում **վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել են** ավագանու անդամների, իսկ Զարթոնք համայնքում՝ համայնքի ղեկավարի լիազորությունները, և Կառավարության որոշմամբ նշանակվել են արտահերթ ընտրություններ:

- ՀՀ գործող **օրենսդրությանը չհամապատասխանության հիմքով** Արմավիրի մարզպետարանի կողմից հաշվետու ժամանակահատվածում **առարկություններ են ներկայացվել** համայնքների ավագանիների **84 որոշման նկատմամբ:**

- Լիազոր մարմնի կողմից հաստատված աշխատանքային ծրագրով Արմավիրի մարզպետի համապատասխան որոշումներով ստեղծված աշխատանքային խմբերի կողմից **ուսումնասիրվել և ամփոփվել են** 2018 թվականի չորրորդ և 2019 թվականի առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակներում մարզի **40 համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքները:** Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում կատարված ուսումնասիրություններով հայտնաբերվել են օրենսդրության պահանջների չպահպանման փաստական տվյալներ, որոնց վերաբերյալ առաջարկություններ են ներկայացվել համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններին՝ թույլ տրված խախտումները վերացնելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ: Քննարկումների արդյունքում սահմանված կարգով և ժամկետներում արձանագրված խախտումները վերացվել են:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

- Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի 2018 և 2019 թվականների տարեկան և ռազմավարական ծրագրերին համապատասխան **5 բժշկական** հաստատությունում (<<Վաղարշապատի հիվանդանոց>> ՊՓԲԸ-ում, <<Մեծամորի ԲԿ>>, <<Էջմիածին բժշկական կենտրոն>>, <<Քեվորք և Անիթա Փակումեանների հիշատակի <<Հիսուսի

Մանուկներ>> առողջության կենտրոն>> և <<Արմավիրի ԲԿ>> ՓԲԸ-ներում) և **39 պետական ոչ առևտրային կազմակերպությունում** իրականացվել է ֆինանսական աուդիտ, որի արդյունքների վերաբերյալ կազմվել են աուդիտորական հաշվետվություններ և եզրակացություններ: **Արմավիրի մարզպետարանի թվով 5 բաժնում** իրականցվել է համապատասխանության աուդիտ, որի արդյունքների վերաբերյալ ևս կազմվել են աուդիտորական հաշվետվություններ և եզրակացություններ:

- Մարզի բուժհաստատություններում ստվերային դրամաշրջանառության բացառման նպատակով ձեռնարկվել են կազմակերպչական և ադմինիստրատիվ բնույթի միջոցառումներ, որոնց արդյունքում ավելացել են վճարովի ծառայություններից գոյացող մուտքերը: Արդյունքում՝ վճարովի ծառայությունները 2019 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են **395 մլն 346 հազար դրամ,** որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավել է **90 մլն 747 հազար դրամով:** Համապատասխանաբար շ**ուրջ 24.8%-ով** բարձրացել է բուժանձնակազմի միջին աշխատավարձը, բոլոր բուժհաստատություններն ապահովվել են այլընտրանքային էներգիայով (ձեռք են բերվել շարժական էլեկտրակայաններ): Իսկ Արմավիրի ԲԿ-ի և **Վաղարշապատի հիվանդանոցի** ֆինանսավորման ավելացման արդյունքում **2 շտապօգնության** բրիգադ է ավելացվել, և մարզի բուժհաստատությունների կտրվածքով դրանց թիվը դարձել է **8:**

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀՀ Արմավիրի մարզպետարանում, համայնքապետարաններում, մարզպետարանի ենթակայությամբ բժշկական և կրթական հաստատություններում *թափուր հաստիքների վերաբերյալ տեղեկատվությունը և դրանց համալրման համար մրցույթների հայտարարությունները պարբերաբար հրապարակվել են մարզպետարանի պաշտոնական կայքի և ֆեյսբուքյան էջի միջոցով՝ դրանով իսկ ապահովելով կադրային քաղաքականության թափանցիկությունը, ընդլայնելով քաղաքացիների դիմելիության շրջանակը:*

- **Կենսաթոշակային տարիքը լրանալու կապակցությամբ** զբաղեցրած պաշտոնից ազատվել է մարզային ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպության **8 տնօրեն**:
- Գործունեության ժամկետն ավարտվելու կապակցությամբ **18-ի հետ լուծվել է կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:**
- **6-ն** ազատվել է **անձնական դիմումի համաձայն:**
- **1-ի լիազորությունները** դադարեցվել են՝ դպրոցի կառավարման **խորհրդի որոշումն ուժը կորցրած ճանաչելու հիմքով**:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

- Եվրասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի շրջանակում Արմավիրի մարզի **41 համայնքում նախատեսվում է 91630 մ երկարությամբ ոռոգման ներտնտեսային ցանցի վերանորոգում՝ համայնքների 10-ը % համաֆինանսավորմամբ:**

- Մարզում նախատեսվում է **հորատել 18** և **վերանորոգել 14 խորքային հոր**:

- **Ակնալիճ և Արշալույս** համայնքներում **կայուն ոռոգման համակարգեր ստեղծելու** նպատակով նախատեսվում է պետության աջակցությամբ անցկացնել կաթիլային ոռոգում (գյուղացիական տնտեսությունները ձեռք են բերելու միայն իրենց հողատարածքի կաթիլային ոռոգման համար նախատեսվող ջրցան խողովակները):

- Պետական բյուջեի միջոցներով **նախնական նախատեսված է 15,4 կմ ճանապարհի հիմնանորոգում**, այդ թվում՝
    - Մ-5 Նալբանդյան-Գետաշեն-Նոր Կեսարիա մարզային նշանակության ճանապարհի 3,0 կմ հատվածի հիմնանորոգում:
    - Մ-5 Արմավիր-Մ-9 (Արմավիր քաղաքի Երևանյան փողոց) հանրապետական նշանակության ճանապարհի 2,07 կմ հատվածի հիմնանորոգում:
    - Մ-5 Երվանդաշատ-Բագարան մարզային նշանակության ճանապարհի 4,5կմ հատվածի հիմնանորոգում:
    - Մ-9, Մ-1 Թալին-Քարակերտ-Թուրքիայի սահման միջպետական նշանակության ճանապարհի 2 կմ հատվածի հիմնանորոգում:
    - Տ-3-9 Լուկաշին Հ17 3,2 կմ հատվածի հիմնանորոգում:
    - Մ-5 Երևան-Արմավիր միջպետական ճանապարհի մասնակի հատվածների հիմնանորոգում:

- Պետական բյուջեի և այլ ներդրումային ծրագրերի միջոցներով նախատեսվում է **9 դպրոցում իրականացնել** մարզադահլիճների կառուցման և վերանորոգման աշխատանքներ, իսկ ներառական կրթություն ստացող երեխաների համար ապահովել անհրաժեշտ պայմաններ:

- ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ մարզի **40 դպրոցի** մինչև տարեվերջ կտրամադրվի մարզական գույք:

- <<ԱՄՐԱՆ>> ՍՊԸ-ն նախատեսում է Արմավիրի մարզում հիմնել նաև կարի ֆաբրիկա և սառնարանային տնտեսություն:

- Հետևողական աշխատանքներ են տարվում ներդրողների հետ՝ մարզում ինտենսիվ այգիներ և սառնարանային տնտեսություններ հիմնելու ուղղությամբ:

- Մարզում շարունակվելու են պետական բյուջեի միջոցներով, ինչպես նաև պետական աջակցությամբ իրականացվող համաֆինանսավորման ծրագրերը՝ ուղղված համայնքների սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը:
- <<Իմ քայլը հանուն Արմավիրի մարզի>> կազմակերպվող ներդրումային համաժողովի նախապատրաստական աշխատանքների շրջանակներում մարզպետարանում հավաքագրվել են տնտեսության տարբեր ոլորտների, մասնավորապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, կրթության, գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, զբոսաշրջության, ճանապարհաշինության, ծառայությունների զարգացմանն ուղղված հավակնոտ ծրագրերի ներդրումային առաջարկներ՝ շուրջ **5.5 մլրդ դրամ** արժողությամբ, որոնց իրականացման արդյունքում կստեղծվի շուրջ **1180 աշխատատեղ:** Անհրաժեշտ ֆինանսական միջոցների և հնարավոր ներդրողների առկայության դեպքում այս ծրագրերի իրականացումը մեծ ազդեցություն կունենա մարզի տնտեսության զարգացման, հավելյալ արդյունքի և նոր աշխատատեղերի ստեղծման հարցում:

ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբերի 19-ի դրությամբ մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքները.

Համայնքների բյուջեների սեփական եկամուտների փաստացի մուտքերը կազմել են **2 մլրդ 935 մլն դրամ**: **Տարեկան 3 մլրդ 130 մլն դրամ պլանի** նկատմամբ կատարողականը կազմել է **93.8 %:** Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ հավաքագրումների ցուցանիշն աճել է **3.2 %-ով կամ 315,3 մլն դրամով:**

- **<u>Հողի հարկ հավաքագրումները</u>** կազմել են **669.6 մլն դրամ:** Տարեկան **864 մլն դրամ** պլանի նկատմամբ կատարողականը կազմել է **77.5 %: Նախորդ տարվա** նույն ժամանակահատվածի նկատմամբ հավաքագրումների ցուցանիշն աճել է **9 տոկոսով կամ 131.7 մլն դրամով:**
- **<u>Գույքահարկի հավաքագրումները</u>** կազմել են **1մլրդ186.5մլն դրամ:** Տարեկան **1 մլրդ 133.7 մլն դրամ** պլանի նկատմամբ կատարողականը կազմել է **104.7 %:** Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ հավաքագրումների ցուցանիշն աճել է 1.9 տոկոսով կամ 97.8 մլն դրամով:
- **<u>Վարձակալական վճարների հավաքագրումները</u>** կազմել են **150.9 մլն դրամ:** Տարեկան **167,7 մլն դրամ** պլանի նկատմամբ կատարողականը կազմել է **90 %:** Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ հավաքագրումների ցուցանիշը նվազել է **0.7 %-ով:**

Սոցիալական աջակցության նպատակով ՀՀ վարչապետին և ՀՀ Արմավիրի մարզպետարան դիմած մարզի **845 քաղաքացու** հաշվետու ժամանակահատվածում ցուցաբերվել է **26 մլն 90 հազար** դրամի աջակցություն: